

**ՊԱԽԹԻԱՐՅԱՆ ԸՄԲՈՍ ՎԱՐԴԱՄԵՏԸ ՎԵՐՁՆԱԿԱՆԱՄԵՍ ՆԵՏԵՑ ԴԻՄԱԿԸ ԵՎ
ԱԶԳԱԴԱՎ ՄԱՏՆՉՈՒԹՅԱՆ ՍԿՍԱՎ, —ԿԸՍԵ , „ԶԱՐԹՈՆՔ“**

Հմբուտներու պարապուս և կախակալաւ Հմայակ վարդապետ Պախտիարյան, դուրս դալու համար հուսահատական կացութենեն, ուր կտապլտկի և փրկելու համար ինքզինքը կարգալուծութենե, սկսած է դիմել գերագոյն քսության և մատնչության միջոցներուն և այլա բոլորովին նետած է իր դիմակը Պոլսու և Սփյուռքի հայության առջև:

Այսպիս, Պախտիարյան վրդ. թրքական աղքայնամու և հետադիմական «Ենի Սապահ» թերթին հետևյալը հայտարարած է.

«Մենք ապօրինի շենք շարժիր: Մեր ըրած ամեն բանեն կառավարությունը օրը օրին լուր ունի (ընդգծումը մերն է, Մ. Խ.): Մենք կառավարության տեղեկատվությամբ (ընդգծումը մերը, Մ. Խ.) կշարժինք: Անհիմն է այն պնդումը, թե Երևանեն պատիժ տրված է մեզի: Չէ պատասխանված Արսլանյանի դիմումին: Եթէ նույն իսկ տրվի, չենք անսար (ընդգծումը մերը, Մ. Խ.), որովհետեւ անոնք եկեղեցին մեջ կիշխեն միայն: Ընտրության շեն կրնար խառնվիլ: Սուստ է այն պնդումը, թէ մենք ալ դիմում ըրած ենք Երևանի և պատասխան շենք ստացած: Երևանի դիմել, կեշանակե առ ոչինչ նկատել թուրք կառավարությանը: Մենք այդպիսի վատություն շենք ըներ: Անոնք կշանագործեն եկեղեցական կապը» (բոլոր ընդգծումներն ալ մերն են, Մ. Խ.):

Այս հայտարարությունը արտատպված է նաև Պոլսու ֆրանսերեն «Ժուլիան տ'Օրիան» թերթի կողմեւ:

Այս անլուր մատնշությունը մեծ հուզում և ընդգույք հառաջացուցած է համարակության մէջ: Պախտիարյան վրդ. ուղղակի ժուլիան կընէ թուրք կառավարության, մատնելով Տեղապահ Արսլանյանը որպես կղերական մը, որ Հայաստանի հետ իր «եկեղեցական կապը կշահագործե» և Երևանի դիմելով կընե այնպիսի «վատություն մը», զոք ինք՝ Պախտիար (օղլուն) ըներ, որպես զի «առ ոշինչ համարած շըլլա» իր սիրելի պաշտաման թուրք կառավարությունը:

Հայ կղերականի մը կողմէ այս հայրենացակ և ազգագործան հրապարակային ժուլիանցիությունը, առնվազն, նողկանք կառթի ամեն իրավ հայու, մանավանդ երբ նկատենք, որ (ինչպես ինք ալ կխոստովանի ըսելով թէ՝ «օրը օրին տեղյակ կպահէ թուրք կառավարությունը իրենց ըրածներենս), անդապար սեմք կմաշեցնե թրք. իշխանություններու, մինչև վարչապետ Արդարե, Պախտիար (օղլու) վրդ. իր վերոհիշյալ հայտարարութենեն ետք, դարձյալ այցելած է վարչապետ Շեմսետին Կյունալթայի, որ նալովայի մէջ կհանգչեր, և Աստուած գիտե միայն թե ինչե՞ր խոսած են քիթ քթի:

(«Հարեւեր», 29-9 49 թ.):

